

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2017թ. ապրիլի 27 -ի

նիստի /արձ.8/

1. 2016-2017 ու. տարվա ավարտական քննաշրջանի նախապատրաստման ընթացքը համարել բավարար,

1.1 հանձնարարել Արվեստի կառավարման և մշակութային քաղաքականության ամբիոնին 2017-2018 ու. տարում Արվեստի կառավարում մասնագիտական ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների ցանկում նախատեսել Թատրոնի և Կինոյի ֆակուլտետների ավարտական կուրսերի ավարտական ներկայացումների (ֆիլմերի) նախահաշիվների կազմումը և մենեջմենթը:

2. Հաստատել և գործողության մեջ դնել ԵԹԿՊԻ-ի մագիստրատուրայի 2017-2018 ու. տարվա առկա ընդունելության կանոնակարգը:

3. Հաստատել ԵԹԿՊԻ-ի հետազոտական գործունեությունը համակարգող խորհրդի ներքոհիշյալ կազմը՝

նախագահ – Նարինե Սարգսյան - ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր,

ԱԳԹ, պրոֆեսոր

անդամներ –1. Հենրիկ Հովհաննիսյան - ԱԳԴ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

2. Գրիգոր Օրդոյան - ԱԳԴ, պրոֆեսոր

3. Սրիանուշ Գալստյան - ԱԳԹ, դոցենտ

4. Արա Խզմայան - ԱԳԹ

3.1 հայտարարել գիտաուսումնական հետազոտական նախագծերի մրցույթ: Հայտերի ընդունման վերջնաժամկետ սահմանել ա.թ. հունիսի 30-ը:

4. Արձանագրել, որ դոցենտի գիտական կոչում շնորհելու նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է գործող կարգի համաձայն և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

4.1 հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը,

4.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 5-րդ կետի դ) ենթակետի համաձայն Մարիամ Ռաֆայելի Օհանյանին ձայների մեծամասնությամբ (28 կողմ, 2 դեմ) շնորհել դոցենտի գիտական կոչում ՇԷ.00.01. «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈՀ-ին հաստատել գիտական խորհրդի որոշումը:

5. Դ. Մուրադյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան